

Հայկական գործարար աշխարհի ներուժը և համագործակցության հրամայականը

Բարև ձեզ, ողջունում եմ մեր բոլոր մասնակիցներին: Ես կփորձեմ ավելի հստակ, կոնկրետ առաջարկել, թե ի՞նչ կարելի է անել, որպեսզի Սփյուռքն ու Հայաստանը միասին ավելի հստակ գործառույթներ ունենան, հստակ գործեն: Ես Անդրանիկ Ալեքսանյանն եմ՝ Հայաստանի Արևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրենը: Հայաստանի արդյունաբերական պալատն ունի հետևյալ կառուցվածքը. բոլոր մարզային կառույցների հետ միասին մենք ունենք մոտավորապես 20 երկրներում ներկայացուցիչներ ու փորձում ենք այդ ներկայացուցիչների միջոցով մեր տեղական բիզնեսին օգնել:

Հիմա մենք ունենք շատ ավելի մեծ հնարավորություն, քանի որ ունենք ավելի հզոր կառույց, որը կոչվում է Հայկական առևտրային ցանց, ու փորձելով ինտեգրել այդ երկու կառույցների գաղափարները միասին, կհասկանանք, թե ի՞նչն է պակասում մեզ համատեղ բիզնես սկսելուն և հստակ ձևակերպելու խանգարող հանգամանքները:

Մենք պետք է կուսակցական և քաղաքական խնդիրները մի կողմ դնենք, քանի որ կարծում եմ դրանք են մեզ խանգարում, որ չենք կարողանում համատեղ բիզնես ունենալ: Ցանկացած խոշոր բիզնեսի համար Հայաստանը փոքր հետաքրքրություն է ներկայացնում և կարծում եմ, որ 3 միլիոն բնակչություն ունեցող երկրում քչերը կցանկանային բիզնես սկսել, սակայն ես կցանկանայի ասել, որ մենք կարող ենք դառնալ շատ լավ հարթակ, որտեղից հնարավոր կլինի կենտրոնացնել լավ գաղափարներ ոչ միայն Հայաստանում բիզնես սկսելու և ուրիշ երկրներ մուտք գործելու համար:

Այստեղ է կայանում մեր սփյուռքի առավելությունը, որը մոտավորապես համաաշխարհային բանկի նման մեծ ֆինանսներ ու ռեալ հնարավորություններ ունի, որոնք պարզապես չենք կարողանում ճիշտ կազմակերպել ու այնպես անել, որ Հայաստան ուղարկեն ոչ թե լոբի ու կոնֆետ կամ այլ օգնություն, այլ սկսեն բիզնես, որը թե՛ երկրին, թե՛ ներդնողին օգուտ կբերի: Դրա համար կարծում եմ, եթե մենք համխմբվենք այդ գաղափարի շուրջ ու օգտագործենք այն ներուժը, որ կա Հայկական առևտրային ցանցում, ոչինչ չի խանգարի մեզ: Հայաստանում կան բիզնես ասոցիացիաներ, որոնք նույնպես պատրաստ են այդ խնդրի մեջ իրենց ներուժը ներդնել: Ունենք գործարարների միություն, որը ևս հզոր կառույց է, առևտրական պալատ, որտեղ համախմբված են փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները և այդ պատճառով էլ կառաջարկելի կոնսոլիդացնել մեր ուժերը հայկական առևտրային ցանցի հետ, փորձել հասկանալ՝ ի՞նչն է մեզ խանգարում, ո՞ր ոլորտներում կարելի է ներդրումներ կատարել, ու փորձենք այնպես սանել, ոչ խոշոր բիզնեսները, ոչ թե դառնան անհատ մարդկանց բիզնես, այլ բաժնետիրական ընկերություններ, որպեսզի

խնդիրներ չլինեն բաժնետոմասեր վաճառելու հետ կապված: Ժամանակի մեջ տեղավորվելու համար թվեմ այն մոդելները, որոնք աշխարհում կան՝ ձևակերպված բիզնես ասոցիացիաներ ու բիզնեսի մոդելներ: Շատ քիչ երկրներում է, որ մի բիզնեսը մի սեփականատեր ունենա, կարծում եմ վաղ, թե ուշ այսպիսի բիզնեսները քանդվում են:

Մեզ այս հավաքը հնարավորություն կտա հասկանալ, թե ինչպե՞ս հավաքվել հայկական առևտրային ցանցի շուրջ, ու այդ բիզնեսները, որոնք կենտրոնացած են այլ երկրներում, տեղափոխել Հայաստան, Հայաստանում վերարտադրել որպես կոնկրետ բիզնես ծրագիր: Ժամանակի մեջ տեղավորվելու համար կարծում եմ, որ Հայաստանի արդյունաբերական պալատը և Հայկական առևտրային ցանցը միասին այս մոդելը հետագայում էլ կփորձեն առաջ տանել: Մենք պետք է ճիշտ օգտագործենք սփյուռքի ներուժը:

Կարծում եմ, որ ամեն ազգի տրված չէ այսպիսի մեծ հնարավորություն ամեն մի երկրում ունենալ մարդկանց խմբեր, որոնք կարող են ստեղծել իրենց առևտրային պալատներն ու ներդրումներ կատարել, թե՛ իրենց բիզնեսի, թե՛ երկրի համար:

Շնորհակալ եմ: